ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի,
Շահումյան փողոց 2
☎ (060) 74 34 01
Էլ. փոստ՝ info@martuni.am

«02» փետրվար 2026 թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Մարտունու համայնքապետարանը, ի դեմս Համայնքի ղեկավար Հ. Հովեյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից «28 » հոկտեմբեր 2025թ-ին կնքել են ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/17-1 ծածկագրով պայմանագիր ,որի համաձայն կատարողը պարտավորվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2025 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 16–ը «ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից Մարտունի համայնքի վարչական տարածքում թափառող կենդանիների (շների) վնասազերծման (ստերիլիզացման) ծառայություն չի իրականացվել :

2025 թվականի դեկտեմբերի 16-ին Մարտունու համայնքապետարնի կողմից shneristerjacum@gmail.com էլեկտրոնային հասցեին ուղարկվել է ծանուցում այն մասին ,որ Մարտունու համայնքի վարչական տարածքում տվյալ փուլի համար կան 100 (մեկ հարյուր) թափառող շներ ,անհրաժեշտ է սահմանված ժամկետում կատարել պայմանագրով ստանձնած պարատավորությունները:

Սակայն «ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ -ի կողմից օրենքով սահմանված ժամկետում (90 օրացույցային օր) նշված ծառայություններն չեն իրականացվել :

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետը միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենագրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամաբ) կատարելը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման առաջարկը, Մարտունու համայնքապետարանը ՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է «28 » հոկտեմբեր 2025թ. կնքված «ԳՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/17-1» պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագրից՝ համարելով այն մասնակի լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ

մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Վերոգրյալ գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900145001484 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026 թվականի փետրվարի 9-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ՝ պայմանագրի կատարման ապահովման և 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման հանձնարարականների բնօրինակները մինչև 2026 թվականի փետրվարի 9-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարան Գնումների բաժին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

Կատարող՝ Արթուր Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. +37494334245